«Իրազեկ քաղաքացիների միավորում» խորհրդատվական ՀԿ
"Union of Informed Citizens" consulting NGO

Երևան 0038, Աբելյան փող. 6/1, սենյակ 409Ա
+374 (0) 11 355042,

6/1 Abelyan str., room 409A, Yerevan 0038
UIC.am, info@uic.am

Տեխնիկական բնութագիր

ՀՀ-ում ուժային կառույցների, ինչպես նաև արտաքին քաղաքական զարգացումների նկատմամբ հասարակական վերաբերմունքի և հասարակության մեդիագրագիտության մակարդակի վերաբերյալ սոցիոլոգիական հետազոտության անցկացման համար

Հետազոտության նպատակը

Հետազոտության նպատակն է բացահայտել Հայաստանի բնակչության կարծիքն ու վերաբերմունքը մի շարք սոցիալ-քաղաքական երևույթների վերաբերյալ և իրականացնել նախորդիվ իրականացված հետազոտության հետ համեմատական վերլուծություն:

Հետազոտության խնդիրները

1. Ուսումնասիրել հանրության իրազեկվածությունը և վերաբերմունքը ուժային կառույցների վերաբերյալ,
2. Ուսումնասիրել հանրության իրազեկվածությունը և վերաբերմունքը արտաքին քաղաքական զարգացումների մասին,
3. Ուսումնասիրել հանրության մեդիագրագիտության մակարդակը:

Տվյալ հետազոտությամբ կարևոր է ուսումնասիրել՝ ինչպիսին է հանրային վերաբերմունքը ուժային կառույցների, դրանց բարեփոխումների նկատմամբ, և որքանով են քաղաքացիները հակված իրավապահ մարմինների հետ համագործակցելուն:

Հետազոտության հաջորդ մասով ցանկանում ենք ուսումնասիրել հանրության ընդհանուր տեղեկացվածությունը արտաքին քաղաքական երևույթների մասին, վերաբերմունքը ՀՀ արտաքին քաղաքականությանը, և որքանով է այն բխում արտաքին քաղաքական երևույթների մասին հանրային ընկալումներից:

Հետազոտության վերջին մասով նախատեսվում է ուսումնասիրել հանրության ընկալումը ԶԼՄ-ների և մեդիայի մասին, հասկանալ ընդհանուր մեդիագրագիտության մակարդակը, բացահայտել այն խնդիրները և հոսքերը, որոնք խոչընդոտում են հասարակության մեդիագրագիտության զարգացմանը: Հետազոտության այս մասում կարևոր է տանել համեմատականներ՝ 2019 թվականին «Իրազեկ քաղաքացիների միավորման» պատվերով կատարված հետազոտության համանման բաժնի արդյունքների հետ (https://uic.am/9333):

Հետազոտության թիրախը

18 տարեկանից բարձր ՀՀ քաղաքացիները Հայաստանի բոլոր մարզերից, այդ թվում նաև Երևանից

Հետազոտության մեթոդ

Ընտրանքային քանակական հարցազրույցների մեթոդ

Հետազոտության ընտրանք

Կարևոր է հնարավորության դեպքում տվյալները ներկայացնել ըստ հասարակության հետևյալ ենթախմբերի

- Երևանի և մարզերի բնակիչներ
- Մարզկենտրոնում/քաղաքում կամ համայնքում բնակվելու փաստը
- Տեղեկատվության աղբյուրները
- Սեռը
- Տարիքը
- Կրթության մակարդակը
- Սոցիալական վիճակը
- Տնտեսական վիճակը (եկամուտներ)

Հարցման տարածքը՝ Հայաստանի բոլոր մարզերն ու Երևան քաղաքը

Հարցումների անցկացման առավելագույն ժամկետը՝ 5 ամիս

Մրցույթի մասնակցության համար անհրաժեշտ է

- Դիմող կազմակերպության պետական գրանցման և գործունեության մասին տեղեկատվություն
- Կոնտակտային տվյալներ, կայքի ու սոցիալական հարթակների հասցեներ (առկայության դեպքում)
- Վերջին անցկացված քանակական հետազոտությունների մասին տեղեկատվություն
- Համանման հետազոտությունների իրականացման նվազագույնը 5 տարվա փորձի մասին վկայող նյութեր
- Իրական շահառուների մասին հայտարարագիրը ՀՀ արդարադատության նախարարություն ներկայացրած լինելը
- Ծրագրի իրականացման ժամանակացույց
- Մեթոդաբանություն
- Գնառաջարկ՝ ոչ ավել, քան 8,5 միլիոն դրամի չափով

«Համաձայնեցված է»

Գործադիր տնօրեն Ա. Մուշեղյան _____ Կ.Տ.

Ծրագրերի համակարգող Դ. Իոաննիսյան _____

4-ը մայիսի 2023 թվականի, ք. Երևան